Հաստատված է
«ՊՐԵՄԻՈՒՄ ԻՆՎԵՍԹ» ՍՊԸ
Մասնակիցների ընդհանուր ժողովի
«14» **հուլիսի** 2026**թ**
Թիվ 6 **որոշմամբ**

Մասնակիցների ընդհանուր ժողովի նախագահ՝

Դավիթ Հարությունյան

«ՊՐԵՄԻՈՒՄ ԻՆՎԵՍԹ» ՍՊԸ
ՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2026

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով սահմանվում են «ՊՐԵՄԻՈՒՄ ԻՆՎԵՍԹ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ Պահառու) կողմից պահառության ծառայությունների մատուցման կանոնները: Սույն կանոնակարգը չի կարգավորում «ՊՐԵՄԻՈՒՄ ԻՆՎԵՍԹ» ՍՊԸ՝ որպես «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատոր պահառուական գործունեությունը:

1.2. Սույն կանոնակարգը սահմանում է Արժեթղթերի հաշիվների հետ կատարվող գործառնությունների ցանկը, դրանց կատարման կարգն ու պայմանները, ինչպես նաև Ծառայությունների մատուցման շրջանակներում Պահառուի գործունեության կանոնները:

1.3. Սույն կանոնակարգը հանդիսանում է հրապարակային փաստաթուղթ, որին կարող է ծանոթանալ ցանկացած շահագրգիռ անձ: Սույն կանոնակարգը ենթակա է հրապարակման Պահառուի պաշտոնական կայքում:

1.4. Պահառուն Ծառայությունները մատուցում է համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, Հաշվարկային համակարգի օպերատորի և Կարգավորվող շուկայի օպերատորի կանոնների, և Ընկերության այլ կանոնակարգերի և ներքին իրավական ակտերի:

1.5. Սույն կանոնակարգը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

1.6. Կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

Ազատ առաքում՝ համաձայնությամբ կամ *FOP* ***փոխանցում.*** Արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի դեպքում պահանջվում են և՛ փոխանցող, և՛ ստացող կողմերի, համապատասխանաբար, փոխանցման և ստացման հանդիպակաց հանձնարարականներ:

Ակտիվային հաշիվ. Պահառուի կողմից Հաշվարկային համակարգի օպերատորի, այլ ռեեստրավարի կամ այլ պահառուի (պահպանման վայրի) կտրվածքով Արժեթղթերի հաշվառման համար բացված Արժեթղթերի հաշիվ,

Ամսական քաղվածք. Պայմանների 4.3 կետում նկարագրված՝ Պահառուի կողմից Հաճախորդին յուրաքանչյուր ամիս տրամադրվող քաղվածքը,

Անվանատեր. անձ, որի անունով անվանական Արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում, Հաշվարկային համակարգի օպերատորի կամ այլ պահառուի մոտ (այդ թվում՝ օտարերկրյա կենտրոնական դեպոզիտարիայում կամ օտարերկրյա պահառուի մոտ) առանց սեփականության իրավունքի փոխանցման գրանցվում են այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող անվանական Արժեթղթերը,

Անվանատիրոջ հաշիվ. Պահառուի կողմից Հաշվարկային համակարգի օպերատորի կամ այլ ռեեստրավարի կամ այլ պահառուի մոտ բացված Արժեթղթերի հաշիվ, որում հաշվառվում են Պահառուի հաճախորդներին պատկանող Արժեթղթերը: Անվանատիրոջ հաշվում հաշվառվող՝ Հաճախորդին պատկանող Արժեթղթերն Անվանատիրոջ հաշվում չեն նույնականացվում որպես Հաճախորդին պատկանող Արժեթղթեր,

Աշխատանքային օր. շաբաթ կամ կիրակի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ տոնական կամ հիշատակի ոչ աշխատանքային օր չհանդիսացող ցանկացած օրացուցային օր,

Արժեթղթերի հաշիվ. Հաճախորդի, Հաճախորդի հաշվում հաշվառվող Արժեթղթերի, այդ Արժեթղթերի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների, Արժեթղթերի հաշվառման ընդունման և գրառումների կատարման ժամկետների և օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկությունների վերաբերյալ Պահառուի կողմից վարվող էլեկտրոնային գրառումների ամբողջություն,

Արժեթուղթ. Օրենքի 3-րդ հոդվածի 1-2-րդ, 5-7-րդ կետերով սահմանված գործիքները,

Բրոքերային ծառայություններ. Պայմանագրի հիման վրա Պահառուի կողմից Հաճախորդին մատուցվող բրոքերային և բրոքերային հաշիվների սպասարկման ծառայությունները,

Գործադիր տնօրեն. Պահառուի միանձնյա գործադիր մարմին, որը ՀՀ օրենսդրությամբ և Պահառուի կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է Պահառուի գործունեության ընթացիկ ղեկավարումը,

Գործառնական օր. յուրաքանչյուր Աշխատանքային օր՝ ժամը 9:30-17:30, երբ Պահառուն իրականացնում է Պահառուական գործառնություններ,

Գործարք. Արժեթղթերով կատարվող գործարք, որը հիմք է հանդիսանում Պահառուի կողմից Պահառուական գործառնությունների կատարման,

Գործընկեր կազմակերպություն. անձ, որի ներգրավմամբ և/կամ որի միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով Պահառուն ծառայություններ է մատուցում Հաճախորդին,

Դիմում. Պահառուի սահմանած ձևի՝ Արժեթղթերի պահառության պայմաններն ընդունելու Դիմումը, որը ներկայացնելով՝ Հաճախորդը միանում է Պայմանագրին,

Թողարկող. ՀՀ Ֆինանսների նախարարությունը, ԿԲ-ը կամ իրավաբանական անձ, որը Հայաստանի Հանրապետության կամ այլ երկրի օրենսդրությանը համապատասխան թողարկում է Արժեթղթեր և դրանցով ամրագրված իրավունքների իրականացման առնչությամբ դրանց սեփականատերերի առջև կրում պարտավորություններ,

Լիազորված ներկայացուցիչ. Հաճախորդի կողմից պատշաճ կերպով լիազորված և Պահառուի կողմից պատշաճ նույնականացված լիազորված անձ,

Ծառայություններ. Պայմանագրի հիման վրա Պահառուի կողմից Հաճախորդին մատուցվող՝ սույն կանոնակարգի 2.1 կետում նկարագրված պահառության ծառայությունները,

Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ. առձեռն առաքում, հաղորդակցություն Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեների և հեռախոսահամարների, Պահառուի և Հաճախորդի նախնական փոխադարձ համաձայնությամբ՝ նաև էլեկտրոնային հաղորդակցության այլ կապուղիների (օրինակ՝ բջջային հավելվածների) միջոցով, փաստաթղթերի փոստային/սուրհանդակային առաքում և առձեռն ստացում՝ ստացման փաստը հավաստող ստորագրությամբ, փաստաթղթերի առաքում ֆաքսի միջոցով, փաստաթղթերի հրապարակում Պահառուի պաշտոնական կայքում,

Հաճախորդ. անձ, որը Պահառուի հետ կնքել է Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր և Պահառուին ներկայացրել է Դիմում,

Հանձնարարական. Հաճախորդի կողմից Պահառուին ներկայացվող՝ պահառուական գործառնությունների կատարման կարգադրություն,

Հաշվարկային համակարգի օպերատոր. Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի օպերատոր,

Պահառու. «ՊՐԵՄԻՈՒՄ ԻՆՎԵՍԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ներդրումային ընկերությունը,

Պահառուական գործառնություն. Օրենքով, դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական և Պահառուի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով Պահառուի կողմից Արժեթղթերի հաշիվներում գրառումների և այլ գործողությունների ամբողջության կատարում,

Պահառուի պաշտոնական կայք. www.premiuminvest.am ինտերնետային կայքը, որում Պահառուն հրապարակում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկատվություն,

Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր. Պահառուի և Հաճախորդի միջև կնքված Բրոքերային ծառայությունների մատուցման, պայմանագիրը,

Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման կանոններով՝. Պահառուի կողմից հաստատված՝ Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման կանոնների վերջին գործող խմբագրությունը:

Պայմանագիր՝ Հաճախորդի կողմից սույն պայմաններին միացման միջոցով մասնավորապես՝ Դիմում ներկայացնելով և դրա ակցեպտը ստանալով կնքվող պահառության ծառայությունների պայմանագիր:

Պասիվային հաշիվ. Պահառուի կողմից իր մոտ բացվող՝ Հաճախորդի Արժեթղթերի հաշիվ,

Սակագներ. Ընկերության իրավասու մարմնի կողմից հաստատված՝ Ծառայությունների սակագները, որոնց համապատասխան Հաճախորդը Պահառուին վճարում է Ծառայությունների համար,

Օտարերկրյա արժեթուղթ. Արժեթուղթ, որի Թողարկողն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի իմաստով չի համարվում ՀՀ ռեզիդենտ,

Օտարերկրյա պահառու. ՀՀ տարածքից դուրս Արժեթղթերի պահառության գործունեություն իրականացնելու իրավասություն ունեցող անձ,

Օրենք. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը:

1.7. Սույն կանոնակարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված նշանակությունը:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

Պայմանագրով կարգավորվում են Պահառուի կողմից Հաճախորդին հետևյալ ծառայությունների մատուցման (Պահառուական գործառնությունների կատարման) հետ կապված իրավահարաբերությունները.

2.1.1. Արժեթղթերի հաշիվներ բացելը և վարելը՝ այդ հաշիվներով գործառնությունների ժամկետներն ու էական պայմանները գրանցելով,

2.1.2. Արժեթղթերի նկատմամբ Հաճախորդի գույքային իրավունքների գրանցման հետ կապված ծառայություններ,

2.1.3. այլ պահառուների մոտ Արժեթղթերի Անվանատեր հանդես գալը՝ որպես Ծառայությունների մատուցման միջոց և երաշխիք,

2.1.4. Արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով Թողարկողից կամ այլ պահառուներից Հաճախորդին, ինչպես նաև Հաճախորդից Թողարկողին կամ այլ պահառուներին տեղեկությունների և փաստաթղթերի փոխանցումը,

2.1.5. Արժեթղթերի նկատմամբ կամ դրանցից բխող սեփականության և այլ գույքային իրավունքները հաշվառելու, այդ իրավունքներն ամրագրելու, փոխանցելու, դադարեցնելու և այլ գործառնությունները գրանցելու հետ կապված այլ ծառայություններ, որոնց բովանդակության, մատուցման կարգի և փոխհատուցման վերաբերյալ Պահառուն և Հաճախորդը կնքում են առանձին համաձայնագիր: Այդպիսի համաձայնագրերը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Պահառուն Հաճախորդին մատուցում է Ծառայությունները Պայմանագրի հիման վրա, որի կնքումը (Պայմանների ակցեպտավորումը) տեղի է ունենում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 444-րդ հոդվածով սահմանված՝ պայմանագրին միանալու կանոններով: Պայմանագիրը կնքելու նպատակով Հաճախորդը լրացնում և Պահառուին է ներկայացնում Դիմումը: Պահառության ծառայության

պայմանագրին կարող են միանալ (Դիմում ներկայացնել) Ընկերության՝ Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած և Ընկերության հաճախորդ հանդիսացող անձինք: Սույն կանոնակարգի համաձայն պահառության ծառայությունների մատուցման պայմանագիրը համարվում է կնքված Ընկերության կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ուսումնասիրվելու արդյունքում դիմումի ակցեպտավորման պահից: Դիմումի ակցեպտավորումն իրականացվում է Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցով Հաճախորդին այն ուղարկելով:

2.3. Պահառուն Հաճախորդին Ծառայությունները մատուցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Պայմանագրի պահանջներին համապատասխան:

2.4. Պահառության պայմանագրի կնքումը Հաճախորդին չի պարտավորեցնում անմիջապես պահառության հանձնել Արժեթղթեր:

2.5. Հաճախորդի Արժեթղթերի հաշվում պահառության հանձնված Արժեթղթերի վերաբերյալ Պահառուի կողմից կատարված գրառումները հավաստում են Արժեթղթերի նկատմամբ Հաճախորդի սեփականության իրավունքը, եթե իրավասու դատարանների դատական ակտերով այլ բան սահմանված չէ:

3. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Պահառության հանձնված Արժեթղթերի հաշվառումը իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

3.2. Պահառության հանձնված Արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը չի հավաստվում Օտարերկրյա արժեթղթերի անվանատիրոջ հաշվին կատարված գրառումներով:

3.3. Ցանկացած պահի դրությամբ Պահառուի կողմից կատարվում է Արժեթղթի սեփականության իրավունքը վկայակոչող մեկ գրառում:

3.4. Պահառուն պատասխանատվություն է կրում պահառության հանձնված Արժեթղթերի սեփականության իրավունքը հավաստող գրառումների պահպանման, արժանահավատության և ժամանակին իրականացման համար:

3.5. Պահառուն կարող է Արժեթղթերի հաշվում գրառումներ կատարել միայն նման գրառումներ կատարելու հիմք հանդիսացող փաստաթղթերի առկայության դեպքում:

4. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

4.1. Արժեթղթերի հաշվի բացումը կատարվում է նախատեսված փաստաթղթերի ամբողջ փաթեթը ներկայացնելուց հետո Պահառուի և Հաճախորդի միջև

Պայմանագիր կնքվելու դեպքում: Պայմանագրի կնքման (Դիմումն ակցեպտավորելու) համար Հաճախորդի կողմից ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկը տրամադրվում է Հաճախորդին Դիմումը ստանալուց հետո:

4.2. Հաճախորդը պարտավոր է անհապաղ Պահառուին ներկայացնել Արժեթղթերի հաշվի բացման համար ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև ժամանակին ծանուցել Հաճախորդի Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցների և Արժեթղթերի հաշվով գործառնություններ կատարելու լիազորություն ունեցող անձանց փոփոխությունների մասին: Նշված փոփոխությունների մասին Պահառուի ժամանակին չտեղեկացվելու դեպքում Պահառուն պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից հաշվետվությունները, քաղվածքները և այլ փաստաթղթերը ժամանակին չստանալու, ինչպես նաև դրա հետևանքով պատճառված վնասի համար:

4.3. Հաճախորդի Արժեթղթերի հաշիվը Պասիվային անալիտիկ հաշիվ է և բացվում է յուրաքանչյուր Հաճախորդի համար առանձին՝ սույն կանոնակարգին համապատասխան:

4.4. Հաճախորդի համար կարող են բացվել Արժեթղթերի հաշվի հետևյալ տեսակները՝

4.4.1. Բրոքերային ծառայությունների համար Արժեթղթերի հաշիվ,

4.4.2. սույն կանոնակարգի 4.4.1. կետում նշված՝ Պահառուի կողմից մատուցվող Բրոքերային ծառայությունների հետ չկապված Արժեթղթերի հաշիվ:

4.5. Արժեթղթերի հաշվի համարակալումը սահմանվում է Պահառուի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և կարող է միակողմանիորեն փոխվել՝ պայմանով, որ Հաճախորդին Արժեթղթերի հաշվեհամարի փոփոխության մասին ծանուցելու պահից 3 (երեք) ամսվա ընթացքում Պահառուն կընդունի Արժեթղթերի հաշվի հետ գործառնություններ կատարելու՝ նախկին հաշվեհամարով ներկայացված Հանձնարարականները:

4.6. Պահառուի մոտ բացված Արժեթղթերի հաշիվներում Արժեթղթերը հաշվառվում են ըստ կրկնակի գրանցման սկզբունքի: Յուրաքանչյուր Արժեթուղթ պահառության ընթացքում արտացոլվում է երկու անգամ՝ մեկ անգամ Ակտիվային հաշվում, իսկ երկրորդ անգամ՝ Պասիվային հաշվում:

4.7. Պահառուն Արժեթղթերի հաշվառումը կատարում է հատերով. մեկ Արժեթուղթը համարվում է հաշվարկի նվազագույն միավոր (Արժեթղթերի քանակը հատերով արտահայտված չլինելու դեպքում նվազագույն միավոր է հանդիսանում Արժեթղթերի անվանական արժեքը):

4.8.Հաշիվը դրանում հաշվառվող Արժեթղթերի առաջնային պահպանման վայր չի հանդիսանում, և Պահառուն չի վարում դրա սեփականատերերի ռեեստրը: Պահառուն հանդես է գալիս Հաշվում հաշվառվող արժեթղթերի Անվանատեր այդ արժեթղթերի այլ պահառուների (ներառյալ՝ Հաշվարկային համակարգի օպերատորի) առջև՝ նրանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Անվանատիրոջ հաշիվներում Հաճախորդին պատկանող Արժեթղթերը միացվում են Պահառուի կամ վերջինիս Պահառուների մյուս հաճախորդների Արժեթղթերին և չեն նույնականացվում որպես Հաճախորդի Արժեթղթեր: Հաճախորդի Արժեթղթերը նույնականացվում են որպես իրեն պատկանող բացառապես Պահառուի մոտ բացված և սպասարկվող Արժեթղթերի հաշիվներում: Օտարերկրյա արժեթղթերի պարագայում Պահառուի Անվանատիրոջ հաշիվները սպասարկող պահառուները նույնպես կարող են հանդես գալ որպես նույն Արժեթղթերի Անվանատեր այլ պահառուների առջև՝ վերջիններիս մոտ ունենալով Արժեթղթերի անվանատիրոջ հաշիվներ:

4.9.Պահառուն կարող է փակել Հաճախորդի՝ զրոյական մնացորդով Արժեթղթերի հաշիվը հետևյալ դեպքերում՝

4.9.1. Պայմանագրի դադարեցման, այդ թվում՝ Պահառուի՝ պահառության գործունեության լիցենզիայի ուժը կորցնելու հետևանքով,

4.9.2. Պահառուի լուծարման դեպքում:

5. ՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

5.1. Հաճախորդը Ծառայությունների դիմաց վճարում է Սակագներով սահմանված չափով:

5.2.Հաճախորդի Արժեթղթերի հաշվում գրանցումների համար հիմք է հանդիսանում՝

5.2.1. Հաճախորդի Հանձնարարականը (ՀԱՎԵԼՎԱԾ 1). այս դեպքում գրանցումը կատարվում է Գործընկեր կազմակերպությունից համապատասխան հաշվետվությունը (քաղվածքը) ստանալուց հետո 1 (մեկ) Աշխատանքային օրվա ընթացքում,

5.2.2. Բրոքերային ծառայությունների ներքո մատուցվելու դեպքում՝ Գործարքների վավերագրերը. այս դեպքում գրանցումը կատարվում է վավերագիրը ստանալուց հետո 1 (մեկ) Աշխատանքային օրվա ընթացքում,

5.3.Հաճախորդի Հանձնարարականները ներկայացվում են թղթային ձևով՝ ըստ սույն կանոնակարգի ՀԱՎԵԼՎԱԾ 1-ով հաստատված ձևի կամ Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոց նշված էլեկտրոնային փոստով: Էլեկտրոնային փոստով ներկայացված Հանձնարարականները պետք է պարունակեն ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում նշված բոլոր պայմանները:

5.4. Ամսական քաղվածքը Հաճախորդին տրամադրվում է մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը:

5.5. Ըստ պահանջի քաղվածքը Հաճախորդին տրամադրվում է համապատասխան Գործարքի իրականացումից հետո 1 (մեկ) Աշխատանքային օրվա ընթացքում:

5.6. FOP փոխանցման (Ազատ առաքում՝ համաձայնությամբ) վերաբերյալ քաղվածքը Հաճախորդին տրամադրվում է համապատասխան փոխանցման իրականացումից հետո 1 (մեկ) Աշխատանքային օրվա ընթացքում՝ ՀԱՎԵԼՎԱԾ 2-ի համաձայն:

5.7. Ամսական և Ըստ պահանջի քաղվածքները պետք է պարունակեն անհրաժեշտ վավերապայմաններ, որոնք թույլ են տալիս բացահայտել կատարված Պահառուական գործառնությունների նկարագիրը և արդյունքը, մասնավորապես՝ գործառնությունների տեսակները, Արժեթղթերի հաշվի համարը, Արժեթղթերի պետական գրանցման համարը, անհատական ծածկագիրը և այլն:

5.8. Բրոքերային ծառայությունների ներքո կատարված Գործարքների վերաբերյալ հաշվետվությունները Հաճախորդին տրամադրվում են համապատասխան Պահառուական գործառնության կատարման օրվան հաջորդող Աշխատանքային օրվա ընթացքում:

5.9. Բոլոր հաշվետվությունները (քաղվածքները) Հաճախորդին տրամադրվում են թղթային տարբերակով՝ Ընկերության գործունեության վայրում առձեռն հանձնելու միջոցով, կամ էլեկտրոնային տարբերակով՝ Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոց նշված էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկելու միջոցով:

5.10. Հաճախորդին թղթային տարբերակով տրամադրված բոլոր հաշվետվությունները (քաղվածքները) գրանցվում են Պահառուի հաշ-վետվությունների և քաղվածքների գրանցամատյանում: Հաշվետվությունները (քաղվածքները) էլեկտրոնային տարբերակով ուղարկվելու դեպքում դրանց գրանցման պահանջը համարվում է պահպանված:

5.11. Հաճախորդն իրավունք ունի ստանալ ցանկացած տեղեկություն Պահառուի մոտ գործող իր Արժեթղթերի հաշիվների վերաբերյալ, ներառյալ՝ փակված Արժեթղթերի հաշիվների վերաբերյալ՝ դրանց փակման պահից 3 (երեք) տարվա ընթացքում:

5.12. Հաճախորդի (Լիազորված ներկայացուցչի) կողմից ներկայացված Հանձնարարականի ընդունումը Պահառուի համապատասխան աշխատակցի կողմից կատարվում է այն Գործառնական օրվա ընթացքում, որում ներկայացվել է Հանձնարարականը: Գործառնական օրվա ավարտից հետո ստացված Հանձնարարականն ընդունված է համարվում հաջորդ Գործառնական օրվա ընթացքում: Օտարերկրյա արժեթղթերով գործառնությունների իրականացման նպատակով տրվող Հանձնարարականների ընդունման ժամկետները

համապատասխանեցվում են Օտարերկյա պահառուների հետ կնքված պայմանագրերով նախատեսված ժամկետներին:

5.13. Եթե Հանձնարարականը չի բավարարում սահմանված պահանջներին, Պահառուն մերժում է Հանձնարարականի ընդունումը: Հանձնարարականի մերժումը կատարվում է գրավոր ձևով՝ նշելով պատճառները և դրանց վերացմանն ուղղված միջոցառումները: Հանձնարարականի մերժումը Հաճախորդին է տրամադրվում Հանձնարարականի տրամադրման օրվան հաջորդող Աշխատանքային օրվա ընթացքում:

5.14. Ընդունված բոլոր Հանձնարարականները ենթակա են գրանցման Հանձնարարականների մատյանում՝ ըստ ստացման հաջորդականության:

5.15. Հանձնարարականը պետք է ընդգրկի դրա իրականացման համար անհրաժեշտ բոլոր վավերապայմանները և բավարարի Հանձնարարականի ձևին ներկայացված պահանջներին:

5.16. Հանձնարարականը ենթակա է կատարման դրանում նշված օրվա ընթացքում կամ դրա և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման օրվա ընթացքում՝ գործառնության կատարման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում, սակայն ոչ ուշ, քան Հանձնարարականի տրմանը հաջորդող 10-րդ օրացուցային օրը: Նշված ժամկետի չբավարարման դեպքում Հանձնարարականը հանվում է, և կազմվում է գործառնության չկատարման վերաբերյալ հաշվետվություն:

5.17. Պահառուի կողմից գրավոր ձևով մերժված Հանձնարարականը համարվում է անվավեր և չի կարող հանդիսանալ Պահառուական գործառնությունների կատարման հիմք:

5.18. Պահառուն մերժում է Հանձնարարականի կատարումը, եթե՝

5.18.1. Հանձնարարականը չի բավարարում նրա ձևին ներկայացվող պահանջներին,

5.18.2. Հանձնարարականը առաջ է բերում հիմնավոր կասկածներ՝ կապված դրա օրինական լինելու հետ,

5.18.3. Հանձնարարականը պահանջում է այնպիսի Պահառուական գործառնության կատարում, որի իրականացման հնարավորությունը սահմանված չէ սույն կանոնակարգով,

5.18.4. Հանձնարարականի կատարումը կհանգեցնի ՀՀ օրենսդրության պահանջների խախտմանը,

5.18.5. Արժեթղթերի քանակը և կարգավիճակը (Արժեթղթերի ծանրաբեռնումը երրորդ անձանց իրավունքներով, գրավադրում և այլն) թույլ չի տալիս կատարել նշված գործառնությունը,

5.18.6. Հանձնարարականը թույլ չի տալիս նույնականացնել դրա առարկա հանդիսացող Արժեթղթերը,

5.18.7. Հանձնարարականի հետ ներկայացված չեն անհրաժեշտ փաստաթղթերը,

5.18.8. Հանձնարարականի տրման պահից 10 (տասը) օրացուցային օրվա ընթացքում ի հայտ չեն եկել այն հանգամանքները, որոնց առկայությամբ է պայմանավորված Հանձնարարականի կատարման հնարավորությունը,

5.18.9. Ազատ առաքում՝ համաձայնությամբ կամ առաքում վճարման դիմաց սկզբունքով գործառնություն կատարելու Հանձնարարական ներկայացվելու դեպքում բացակայում է հակադարձ Հանձնարարականը, կամ Հաճախորդի ներկայացրած և հակադարձ Հանձնարարականների՝ դրանց կատարման համար անհրաժեշտ տվյալները միմյանց չեն համապատասխանում,

5.18.10. Օրենքով, դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական և Պահառուի ներքին իրավական ակտերով սահմանված այլ հիմքերի առկայության դեպքում:

6. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

6.1. Պահառուն պարտավոր է ապահովել Հաճախորդի հաշիվների վերաբերյալ ծառայողական տեղեկությունների գաղտնիությունը: Այդպիսի տեղեկությունների թվին են դասվում (չսահմանափակվելով).

6.1.1. Հաճախորդի Արժեթղթերի հաշվի վիճակի վերաբերյալ տեղեկությունները,

6.1.2. Հաճախորդի Արժեթղթերի հաշվով կատարվող գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները,

6.1.3. այլ տեղեկությունները, որոնց գաղտնիության պահպանման վերաբերյալ առկա է Հաճախորդի գրավոր դիմումը:

6.2. Պահառուի մոտ վարվող Արժեթղթերի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները կարող են տրամադրվել միայն Հաճախորդին, նրա Լիազորված ներկայացուցչին, իրավասու պետական մարմիններին (ՀՀ օրենսդրությամբ նրանց վերապահված լիազորությունների իրականացման շրջանակում), Թողարկողին և

նրա Լիազորված ներկայացուցչին, Օտարերկրյա պահառուին, որի մոտ բացված է Պահառուի Օտարերկրյա արժեթղթերի Անվանատիրոջ հաշիվը, ինչպես նաև օրեն-քով սահմանված այլ անձանց:

6.3. Պահառուի կողմից Հաճախորդի Արժեթղթերի հաշվի մասին գաղտնիք ներկայացնող տեղեկությունների բացահայտման դեպքում Հաճախորդն իրավունք ունի Պահառուից պահանջել խախտված իրավունքի վերականգման նպատակով վնասի հատուցում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4. Պահառուն իրավունք ունի սույն բաժնով նախատեսված գաղտնի տեղեկությունները բացահայտել երրորդ անձանց միայն Հաճախորդի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

7. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

7.1. Պահառուն և Հաճախորդը պատասխանատվություն են կրում պայմանագրով ստանձնած իրենց պարտականությունների պատշաճ կատարման համար ՀՀ օրենսդրության, սույն Կանոնակարգի համաձայն:

7.2. Կողմերը ազատվում են իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրա պատճառ է հանդիսացել մյուս կողմի՝ պայմանագրով տրված երաշխիքների և հավաստիացումների՝ իրականությանը չհամապատասխանելը:

7.3. Ցանկացած դեպքում Պահառուի պատասխանատվությունը Հաճախորդի առջև սահմանափակվում է դիտավորություն կամ ակնհայտ անփութություն ցուցաբերելու արդյունքում նրան պատճառված իրական վնասի չափով:

7.4. Պահառուն պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց, այդ թվում՝ գործարքների կնքման գործընթացում Պահառուի կողմից ներգրավված Գործակալների (ենթակոմիսիոներների) և/կամ Հաճախորդի միջոցները հաշվառելու համար որպես պահառու ընտրված անձանց անվճարունակության կամ սնանկության, ինչպես նաև նրանց կողմից գործարքներով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չգիտեր և չէր կարող իմանալ նշված հանգամանքների առկայության կամ անխուսափելիության մասին:

7.5. Պահառուն պատասխանատվություն չի կրում ցանկացած բնույթի տեխնիկական խափանումների արդյունքում Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չի ապացուցվում, որ այդպիսի խափանումները և վնասը տեղի են ունեցել Պահառուի դիտավորությամբ տեղի ունեցած գործողությունների արդյունքում:

7.6. Ի լրումն Պայմաններով նախատեսված այլ դրույթների, Ընկերությունը պատասխանատվություն չի կրում.

7.6.1. Հաճախորդի կողմից Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար.

7.6.2. Հաճախորդին թողարկողի կամ այլ անձանց կողմից տրամադրված տեղեկատվության հավաստիության և ճշտության համար.

7.6.3. Պայմանագրի ոչ պատշաճ կատարման համար, որը առաջացել է Հաճախորդի կողմից սխալ կամ ոչ ամբողջական տեղեկատվության տրամադրման կամ նման տեղեկությունների փոփոխության վերաբերյալ Ընկերությանը չծանուցելու հետևանքով:

7.7. Ծառայությունների դիմաց վճարների ուշացման դեպքում Հաճախորդին պահանջ ներկայացնելուց 15 (տասնհինգ) Աշխատանքային օր հետո Պահառուն իրավունք է ստանում Ծառայությունների համար վճարները և կիրառելիության դեպքում՝ տույժերը գանձել՝ վաճառելով Հաճախորդին պատկանող Արժեթղթերն այն քանակով կամ ծավալով, որն անհրաժեշտ է Հաճախորդի՝ Պահառուի նկատմամբ սույն կետում մատնանշված պարտավորությունները կատարելու համար:

7.8.Հաճախորդի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարվելու դեպքում նրա Արժեթղթերի հաշվում հաշվառվող Արժեթղթերն արգելադրվում են, և Արժեթղթերի հաշվով բոլոր գործառնությունները դադարեցվում են մինչև պարտավորությունների կատարումը:

7.9. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Ընկերությունն ու Հաճախորդը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

7.10. Անհաղթահարելի ուժի արդյունք հանդիսացող իրավիճակներ են համարվում տարերային աղետները, վթարները, հրդեհները, զանգվածային անկարգությունները, գործադուլները, ռազմական գործողությունները, Պայմանագրում նշված գործունեության տեսակները ուղղակիորեն կամ անուղղակի ձևով արգելող և Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարմանը խոչընդոտող օրենսդրական և նորմատիվ ակտերի, պետական մարմինների որոշումների (հրամանների) օրինական ուժի մեջ մտնելու փաստերը, կամ Կողմերի կամքից անկախ այլ իրադարձությունները:

7.11. Պայմանագրի այն Կողմը, որը չի կարող կատարել իր պարտականությունները՝ կապված անհաղթահարելի ուժի ազդեցության հետ, պարտավոր է այդ մասին, անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, հայտնել մյուս Կողմին և կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները, որպեսզի նվազեցվեն Կողմերի կրած վնասները:

7.12. Կողմերի պարտավորությունների կատարման ժամկետը հետաձգվում է այն ժամանակին համաչափ, որի ընթացքում գործում անհաղթահարելի ուժը:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Հաճախորդն իրավունք ունի լուծել պահառության Պայմանագիրը (որը կնքվել է սույն Կանոնակարգին միացման միջոցով)՝ այդ մասին առնվազն 20 օր առաջ Պահառուին ծանուցելու դեպքում:

8.2. Պահառության պայմանագիրը լուծվում է, երբ դադարում է Հաճախորդի հետ կնքված Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ դրանում և Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման կանոններով նախատեսված դեպքում և կարգով:

8.3. Պայմանագրից բխող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: 20 օրվա ընթացքում լուծման չհասնելու դեպքում վեչը ենթակա է լուծման ՀՀ դատարանների կողմից:

8.4. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

8.5. Պահառուի լիազորությունների դադարեցման դեպքում Հաճախորդի կողմից նրան հանձնված Արժեթղթերը և դրամական միջոցները վերադարձվում են Հաճախորդին նրա առաջին իսկ պահանջով:

8.6. Սույն կանոնակարգի փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընդհանուր ժողովի կողմից (եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան սահմանված չէ) և ուժի մեջ են մտնում Ընդհանուր ժողովի կողմից սահմանված ժամկետներում, որը պետք է համապատասխանի օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Հավելված 1

«ՊՐԵՄԻՈՒՄ ԻՆՎԵՍԹ» ՍՊԸ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

Արժեթղթերի փոխանցման տեսակը	☐ Ազատ առաքում՝ համաձայնությամբ (FOP փոխանցում) ☐ Առաքում վճարման դիմաց (DVP փոխանցում)			
Արժեթղթերը փոխանցող կողմ, Հաշվետիրոջ Հաշվի Օպերատոր	☐ ՊՐԵՄԻՈՒՄ ԻՆՎԵՍԹ ՍՊԸ ☐ Այլ (նշել)			
Արժեթղթերը ստացող կողմ, Հաշվետիրոջ Հաշվի Օպերատոր	☐ ՊՐԵՄԻՈՒՄ ԻՆՎԵՍԹ ՍՊԸ ☐ Այլ (նշել)			
ԱՐԺԵԹՂԹԵՐԸ ՓՈԽԱՆՑՈՂ ԿՈՂՄ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՇՎԵՏԻՐՈՋ ՏՎՅԱԼՆԵՐԸ				
ԱԱՀ/Ընկերության անվանում				
Արժեթղթերի հաշվեհամարը				
Անձը հաստատող (պետ. գրանցումը հավաստող) փաստաթուղթ	Սերիա		Համար	
Տրման ամսաթիվը				
Կարգավիճակ Սեփականատեր Անվանատեր Այլ				
Լիազորված ներկայացուցիչ (լրացնել սույն հանձնարարականը լիազորված ներկայացուցչի կողմից ստորագրման և ներկայացման դեպքում)				
ԱԱՀ				
Անձը հաստատող (պետ. գրանցումը հավաստող) փաստաթուղթ	Սերիա		Համար	
Հեռախոս				
ԱՐԺԵԹՂԹԵՐԸ ՍՏԱՑՈՂ ԿՈՂՄ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՇՎԵՏԻՐՈՋ ՏՎՅԱԼՆԵՐԸ				
ԱԱՀ/Անվանում				
Արժեթղթերի հաշվեհամարը				
Անձը հաստատող (պետ. գրանցումը հավաստող) փաստաթուղթ	Սերիա		Համար	
Տրման ամսաթիվ				
Կարգավիճակ Սեփականատեր Անվանատեր Այլ				
ՎԵՐՋՆԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ (լրացնել արժեթղթերը անվանատիրոջ արժեթղթերի հաշվից փոխանցման դեպքում)				
ԱԱՀ/Անվանում				
Անձը հաստատող (պետ. գրանցումը հավաստող) փաստաթուղթ				
ՓՈԽԱՆՑՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐ				
Թողարկողի անվանում				
Փոխանցման ենթակա արժեթղթերի ԱՄՏԾ/ԱՆԾ				
Գործարքի հիմքում ընկած արժեթղթերի փոխանցման մանրամասներ				
Փոխանցման ենթակա արժեթղթերի քանակ	Թվերով			
	Տառերով			
Փոխանցման ենթակա արժեթղթերի միավորի անվանական արժեքը	Թվերով			
	Տառերով			

Փոխանցման ենթակա արժեթղթերի պայմանագրային գինը	Տառերով	
Փոխանցվման ենթակա դրամական միջոցի մեծությունը(լրացվում է DVP փոխանցման դեպքում)	Թվերով	
	Տառերով	
Արժույթը (լրացվում է DVP փոխանցման դեպքում)	☐ Հրամ ☐ Այլ(նշել)	
Վաճառող կողմի (Հաշվետիրոջ) բանկային հաշվեհամարը և սպասարկող բանկի անվանումը	Պահառու Ընդունող/Առաքող կողմ Հաշվեհամար	
Վերջնահաշվարկի ամսաթիվը (օր/ամիս/տարի)		
Կից ներկայացվող փաստաթղթեր (նշել)		
Այլ նշումներ		

Փոխանցող Ստացող

Ստորագրություն

Ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«ՊՐԵՄԻՈՒՄ ԻՆՎԵՍԹ» ՍՊԸ

Գործարքի վավերագիր

Գործարքի վավերագիր
Հաճախորդ `
Վավերագրի լրացման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի)
Գործարքի վավերագրի հիմք՝

N	Թողարկողի անվանումը	Արժեթղ-թերի դասը	Գործարքի կնքման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի)	Գործարքի կատարման ամսաթիվը /ժամը րոպե/ժամ/ օր/ ամիս/ տարի)	Գործարքի տիպը (բորսայա-կան/արտաբորսայական)	Գործարքի տեսակը	Հանձնարարականի տեսակը	Արժեթղթերի քանակը	Մեկ արժեթղթի արժեքը	Կուտակ-ված արժեկտ-րոնային եկամուտ	Գործարքի ընդհանուր գումարը	Գանձվող միջնորդավճարի մեծությունը		Գոր-ծարքի մյուս կողմ
												Բորսայական/ Գործընկերոջ միջնորդա-վճար	Բրոքերային միջնոր-դավճար	

Աշխատակից՝ ----------

(անուն,ազգանուն) (ստորագրություն)

Հավելված 3

«ՊՐԵՄԻՈՒՄ ԻՆՎԵՍԹ» ՍՊԸ

Դիմումի օրինակելի ձև

ԴԻՄՈՒՄ

Հաճախորդի անուն, ազգանուն՝ ——————————

Հաճախորդի Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի թիվ՝ ——————————

Սույն Դիմումը ներկայացնելով՝ ընդունում եմ և միանում եմ ««Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ պահառության ծառայությունների մատուցման կանոնակարգին» (այսուհետ՝ Կանոնակարգ), որն ընդունվել է «Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ իրավասու մարմնի կողմից և մշտապես հասանելի է պաշտոնական www.premiuminvest.am կայքում և գրասենյակում: Ընդունում եմ, որ սույն Դիմումը ներկայացնելով և սույն դիմումի ի պատասխան ակցեպտ ստանալով իմ և «Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ միջև կնքվում է պահառուական ծառայությունների մատուցման պայմանագիր և որ Կանոնակարգը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը: Ընդունում և համաձայնվում եմ, որ Պայմանագիրը համարվելու է կնքված «Պրեմիում Ինվեսթ» ՍՊԸ կողմից Դիմումի ակցեպտավորման դեպքում՝ առանց իմ հավելյալ համաձայնության անհրաժեշտության: Կանոնակարգի հետագա ցանկացած փոփոխություն կամ լրացում, եթե այն կատարվել է դրանցում սահմանված փոփոխման կարգին համապատասխան, կհամարվի սույն Պայմանագրի անբաժանելի մաս:

Ամսաթիվ՝ ——————————

Ստորագրություն՝ ——————————